ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն – Խորհրդարանական ընտրություններ, ապրիլի 2, 2017թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունները լավ էին կազմակերպված և հիմնարար ազատությունները ընդհանուր առմամբ պահպանվել էին: Չնայած այն հանգամանքին, որ իրավական դաշտում իրականացվել են ողջունելի բարեփոխումներ և նոր տեխնոլոգիաներ են ներդրվել նվազեցնելու ընտրական խախտումների դեպքերը, ընտրությունները ստվերվեցին ընտրակաշառքների և քաղծառայողների և մասնավոր ընկերությունների աշխատողների վրա ճնշումների մասին արժանահավատ տեղեկություններով: Դա նպաստեց հանրության կողմից ընտրությունների նկատմամբ ընդհանուր վստահության ու հավատի բացակայությանը: Ընդհանուր առմամբ ընտրության օրը հանգիստ էր և խաղաղ, սակայն արձանագրվեցին կազմակերպչական խնդիրներ և գործընթացին անհարկի միջամտություններ, հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից:

Ընտրությունները կարգավորող իրավական դաշտը համապարփակ է, բայց խրթին: Նոր Ընտրական օրենսգիրքն ընդունվել է ընտրություններից ավելի քիչ քան մեկ տարի առաջ իրականացված բարեփոխման գործընթացի արդյունքում, որը ՄԸԴԱ-ի զրուցակիցներից շատերը բնութագրել են որպես ընդգրկուն և դիտարկել են որպես քայլ առաջ ընտրական գործընթացում ընդհանուր վստահության ամրապնդման հարցում: Հաշվի են առնվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ –ի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի մի շարք նախկինում արված հանձնարարականներ, թեև որոշ ոլորտներ հետագա ուշադրության կարիք ունեն: ՄԸԴԱ-ի զրուցակիցներից մի քանիսը քննադատեցին նոր ընտրական համակարգի խրթինությունը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հավանություն չեն տվել վերջնական տեքստին՝ տեղական դիտորդների հետ կապված սահմանափակումների պատճառով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) պահպանել է բոլոր իրավական վերջնաժամկետները և իր գործունեությունը իրականացրել է թափանցիկ՝ գործելով կոլեգիալության սկզբունքով և արդյունավետորեն: ԿԸՀ-ն հաստատել է Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ), Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) ընթացակարգային կանոնները, ինչպես նաև ուղեցույցներ՝ դիտորդների և վստահված անձանց համար: ԿԸՀ-ն հրապարակեց նաև մի շարք պարզաբանումներ Ընտրական օրենսգրքի վերաբերյալ՝ մեծամասամբ ի պատասխան ՀԿ-ների դիմումներին և նախաձեռնողաբար արձագանքեց քարոզարշավի ընթացքում տեղ գտած խախտումներին: ԿԸՀ-ի վեբկայքում ժամանակին են հրապարակվել

որոշումները և օրակարգերը: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն պատշաճ կերպով չի քննարկել բողոքները:
ՄԸԴԱ-ի զրուցակիցներից շատերը վստահություն արտահայտեցին ԸԸՀ-ների աշխատանքի վերաբերյալ: ՏԸՀ-ների անաչառության հետ կապված կասկածների պատճառն այն էր, որ ղեկավար պաշտոնները բաշխվել էին հօգուտ իշխող կուսակցության: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԸԴԱ-ն ընդհանուր առմամբ դրական է գնահատել ԿԸՀ-ի կողմից ստորին մակարդակի հանձնաժողովների համար կազմակերպված ուսուցողական դասընթացների և ընտրողների համար կրթական նյութերի որակը, սակայն միշտ չէ, որ տպագիր նյութերը հասել էին թիրախային լսարանին:

Միջգերատեսչական համագործակցության ընդլայնման արդյունքում բարելավվեց ընտրացուցակների ճշգրտությունը: Ընտրացուցակում ընդգրկված էին ընդհանուր առմամբ 2,654,195 ընտրողներ, ներառյալ բավականին մեծ թվով արտերկրում բնակվող ընտրողներ: Որոշ շահագրգիռ կողմեր արտահայտեցին իրենց մտահոգություններն առ այն, որ քրեական պատասխանատվություն է նախատեսված այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու համար: Թեպետ օրենքը նախատեսում է բավականաչափ մեխանիզմներ, որոնցով ընտրողները կարող են դիմել ընտրացուցակների ճշգրտման համար, սակայն ընտրացուցակներում դեռևս առկա են հասցեներ, որտեղ հաշվառված են մեծ թվով ընտրողներ, ինչը պահանջում է լրացուցիչ մանրակրկիտ ստուգում իշխանությունների կողմից:

Ընտրության օրն ընտրողների ինքնությունը հաստատվել է Ընտրողների նույնականացման էլեկտրոնային սարքերի (ԸՆՍ) օգնությամբ, որոնք պարունակում էին ընտրացուցակների էլեկտրոնային տարբերակը: Սքանավորվել էին նաև ընտրողների մատնահետքերը, և ԿԸՀ հայտել էր ՄԸԴԱ-ին, որ պլանավորում է կատարել խաչաձև ստուգումներ՝ բողոքներ ստանալու դեպքում բազմակի քվեարկության հնարավոր դեպքերը բացահայտելու համար: Առաջին անգամ ՏԸՀ-ների կողմից հրապարակվեցին ստորագրված ընտրացուցակների սկանավորված տարբերակը, որը ՄԸԴԱ-ի բոլոր զրուցակիցները կարևորեցին ուրիշի փոխարեն քվեարկությունը կանխելու տեսանկյունից, անկախ այն բանից, որ բացահայտվում էին ընտրողի անձնական տվյալները:

Համապարփակ գործընթացի շրջանակում ԿԸՀ-ն գրանցեց հինգ քաղաքական կուսակցությունների և չորս կուսակցական դաշինքների թեկնածուների ցուցակները: Առաջին անգամ համակարգով նախատեսված էր չորս մանդատ վերապահել ազգային փոքրամասնություններին, սակայն որոշ կուսակցություններ նշեցին ազգային փոքրամասնություններից թեկնածուներ ներգրավելու դժվարության մասին: Ընտրությունների բոլոր մասնակիցները պահպանել էին ամբողջ թվով քառյակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցչի վերաբերյալ պահանջը, և ընդհանուր թվով 1,558 թեկնածուների 30 տոկոսը կանայք էին: Որպես դրական զարգացման դրսևորում և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախկինում արված հանձնարարականներին համահունչ, գենդերային քվոտան կիրառվում է նաև ստացված և թափուր մանդատների բաշխման ժամանակ:

Պաշտոնական քարոզարշավը սկսվել է մարտի 5-ին և ավարտվել ապրիլի 1-ին: Քարոզարշավի մեկնարկը դանդաղ էր և սկսեց ակտիվանալ ընտրության օրվան

ընդառաջ: Քարոզարշավների մեծ մասն իրականացվում էր թեկնածուների, այլ ոչ թե կուսակցության ծրագրերի կամ քաղաքականությունների շուրջ: Մասնակիցները հիմնականում կարող էին անցկացնել քարոզարշավ՝ առանց որևէ սահմանափակման, սակայն հանրապետության որոշ վայրերից հաղորդումներ ստացվեցին բռնության առանձին դեպքերի մասին: Դրական էր այն հանգամանքը, որ պետական շատ պաշտոնյաներ արձակուրդ վերցրեցին քարոզարշավին մասնակցելու համար:

Այնուամենայնիվ, առկա են հավաստի տեղեկություններ որոշ կուսակցությունների կողմից ընտրակաշառքի բաժանման և հօգուտ իրենց քվեարկելու համար պետական ծառայողների, այդ թվում՝ բժշկական հաստատությունների և դպրոցների աշխատակցիների վրա ճնշումներ գործադրելու ու ահաբեկելու մասին, ինչը նպաստեց ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահության ընդհանուր պակասը:

Ուժեղացվել էին քարոզարշավի ֆինանսավորման մասին հաշվետվությունների և վերահսկողության վերաբերյալ օրենսդրական որոշ դրույթները, սակայն հաշվետվություններում ընդգրկված չէին, այսպես կոչված, կազմակերպչական ծախսերը, ինչպիսիք են՝ շտաբների, փոխադրամիջոցների և կապի միջոցների ծախսերը, ինչը պակասեցնում էր թափանցիկությունը: Բոլոր մասնակիցները՝ նախքան ընտրության օրը, ԿԸՀ-ի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (ՎՎԾ) են ներկայացրել քարոզարշավի համար մուտքերի և ծախսերի մասին հայտարարագրերը, որոնք հրապարակվել են առցանց: Թեպետ ՎՎԾ-ն չի հայտնաբերել քարոզարշավների ֆինանսավորման հետ կապված որևէ չարաշահում, սակայն այն նախաձեռնողաբար չի ուսումնասիրել հայտարարագրերի ճշգրտությունը:

Խոսքի ազատությունը երաշխավորված է Սահմանադրությամբ և կիրառվում է լայնորեն: Սակայն հեռարձակվող լրատվամիջոցների ազատությունը սահմանափակված էր դրանց սեփականատերերի կողմից խմբագրական անկախությանը միջամտելու միջոցով: Դա հանգեցրեց լրագրողների ինքնագրաքննության և կառավարությանը քննադատող հաղորդումների ապաքաջալերմանը, ներառյալ հանրային հեռուստատեսությամբ: Լրագրողները նշեցին, որ բռնության վերջին դեպքերը և մեղավորներին պատասխանատվության չենթարկելը խոչընդոտում են լրագրողների աշխատանքը և հարցականի տակ դնում նրանց անվտանգությունը: Համացանցային ազատության հարցում միջամտություն առկա չէ, և տեղեկատվական առցանց աղբյուրները նպաստում են քաղաքական բազմակարծության ընդլայնմանը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից լրատվամիջոցների մշտադիտարկումը ցույց տվեց, որ քարոզարշավի ժամանակահատվածում *Հ1* հանրային ալիքը իր լուրերի թողարկումներում հավասար է լուսաբանել բոլոր մասնակիցներին:

ՄԸԴԱ-ի զրուցակիցներից շատերը նշեցին, որ հանրության շրջանում առկա է ընտրախախտումների մասին հայտնելու դժկամություն, ինչը պայմանավորված է բողոքների քննման մեխանիզմի արդյունավետության նկատմամբ վստահության բացակայությամբ: Դատական համակարգի, ընտրական հանձնաժողովների և իրավապահ մարմինների անկախության բացակայությունը, և նրանց կողմից բողոքների լուծման եղանակները հարցականի տակ են դնում իրավական պաշտպանության

մեխանիզմի արդյունավետությունը, ինչը հակասում է ԵԱՀԿ-ի առաջ ստանձնած պարտավորություններին և Եվրոպայի խորհրդի չափանիշներին:

Թույլատրված է միջազգային և տեղական դիտորդական առաքելություն իրականացնել և կուսակցության վստահված անձինք իրավունք ունեն ներկա գտնվել ընտրատեղամասերում: ԿԸՀ հավատարմագրել էր ընդհանուր թվով 28,021 տեղական դիտորդներ, սակայն լրատվամիջոցները և քաղաքացիական հասարակությունը քննադատեցին ընտրատեղամասերում տեղական դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների թվի ընտրողաբար սահմանափակելու օրենսդրական հնարավորությունները: Ավելին, միջազգային ՀԿ-ներին հրաժարվել են ուղարկել ընտրությունները դիտարկելու հրավերներ, ինչը հակասում է ԵԱՀԿ-ի առաջ ստանձնած պարտավորություններին:

Ընտրությունների օրն ընդհանուր առմամբ անցել է հանգիստ և խաղաղ: Ընդհանուր առմամբ պահպանվել են քվեարկության ընթացակարգերը, և ԸՆՍ-ներն աշխատել են արդյունավետ: Այնուամենայնիվ, քվեարկության ընթացքում արձանագրվել են կուտակումներ, երկար հերթեր և կուսակցությունների ներկայացուցիչների և ոստիկանության կողմից միջամտության դեպքեր: Չնայած օրենքի պահանջներին, թույլատրվել է ընտրատեղամասերին հարող տարածքում խմբերով հավաքվելը: Ընտրատեղամասերի 35 տոկոսում, որտեղ իրականացվել է դիտարկում, ընտրողները դժվարություն են ունեցել հասկանալու քվեարկության գործընթացը, և արձանագրվել են խմբով քվեարկելու դեպքեր, ինչպես նաև ընտրողների վրա ազդելու փորձեր: Քվեարկության արդյունքների հաշվարկն իրականացվել է թափանցիկ, սակայն շատ դեպքերում գնահատվել է բացասաբար, հիմնականում կուսակցությունների ներկայացուցիչների միջամտության, ինչպես նաև որոշ ընթացակարգային բացթողումների պատճառով: ՄԸԴԱ-ի դիտորդները դիտարկված 38 ԸԸՀ-ներից 33-ում քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը գնահատել են դրական: Չնայած մարդաշատ լինելու հանգամանքին, ԸԸՀ-ներում քվեարկության արդյունքների արձանագրությունների ամփոփումն ընդհանուր առմամբ եղել է լավ կազմակերպված:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախադրյալներ

2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հայաստանը կիսանախագահական հանրապետությունից անցում է կատարում խորհրդարանական քաղաքական համակարգի: Սահմանադրական փոփոխություններով նախագահի լիազորությունները կրճատվեցին՝ հօգուտ վարչապետի և խորհրդարանի, իսկ մեծամասնական ընտրական համակարգը փոխարինվեց համամասնական համակարգով՝ իր մեջ ընդգրկելով ընտրատարածքային ցուցակներ[1]: Այս

[1] Տե՛ս Եվրոպայի Խորհրդի Վենետիկի հանձնաժողովի Կարծիք Սահմանադրության փոփոխությունների նախագծի մասին: Իր ներկայիս մանդատի՝ 2018 թվականին ավարտվելուց հետո, նախագահին ընտրելու է խորհրդարանը՝ անուղղակի ընտրությամբ, յոթ տարի ժամկետով:

ընտրությունները նոր քաղաքական համակարգով անցկացված առաջին ընտրություններն էին:

2012 թվականի խորհրդարանական վերջին ընտրություններում Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) ստացավ 69 ձայն և ձևավորեց կառավարություն: 2016 թվականին ՀՀԿ-ն կոալիցիա կազմեց խորհրդարանում հինգ պատգամավոր ունեցող Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) հետ: Խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունների թվում էին «Բարգավաճ Հայաստան»-ը (ԲՀԿ)՝ 33 մանդատով, «Հայաստանի ազգային կոնգրես»-ը (ՀԱԿ)՝ 7 մանդատով, «Հայկական վերածնունդ»-ը (ՀՎԿ)՝ 5 մանդատով և «Ժառանգություն»-ը՝ 4 մանդատով:

Իրավական դաշտը և ընտրական համակարգը

Խորհրդարանական ընտրությունները կարգավորվում են համապարփակ իրավական դաշտով, որը հիմնականում բաղկացած է փոփոխված Սահմանդրությունից, 2016 թվականի Ընտրական օրենսգրքից և ԿԸՀ կանոնակարգերից ու որոշումներից[2]: Բարեփոխման գործընթացը, որի արդյունքում մշակվեց նոր Ընտրական օրենսգիրքը, բնութագրվում է որպես ընդգրկուն և ՄԸԴԱ-ի զրուցակիցներից շատերի կողմից ընկալվում է որպես մեկ քայլ առաջ՝ ընտրական գործընթացի նկատմամբ ընդհանուր վստահություն ձևավորելու հարցում: Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ի սկզբանե ներգրավված են եղել Ընտրական օրենսգրքի նախագծի քննարկումներում, բայց տեքստի վերջնական տարբերակին չեն համաձայնել, քանի որ նրանց կոչերը՝ մեղմելու տեղական դիտորդներին առնչվող սահմանափակումները հաշվի չեն առնվել:

Նոր Ընտրական օրենսգիրքը, որն ընդունվել է ընտրության օրվանից ավելի քիչ քան մեկ տարի առաջ[3], իր մեջ ներառում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախկինում արված հանձնարարականների զգալի մասը[4]: Այն նախատեսում է ընտրողի ինքնության հաստատման բարելավված մեխանիզմներ, ընտրական մարմինների անկախությունն ամրապնդող միջոցներ, տեղական դիտորդների համար պարտադիր թեստավորման չեղարկում և թեկնածուների ցուցակներում գենդերային քվոտաների ավելացում: Փոփոխություններով հստակեցվում են նաև քարոզարշավի, քարոզարշավի ֆինանսավորման, թեկնածուների գրանցման և

---

2 Հարակից օրենսդրությունն ընդգրկում է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը, «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քրեական օրենսգիրքը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը: Օրենքների մեծ մասը լրամշակվել է՝ նոր Ընտրական օրենսգրքին համապատասխանեցնելու նպատակով: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն առայժմ վերաբերում է հին ընտրական համակարգին:

3 2002 թվականի Եվրոխորհրդի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերի վերաբերյալ լավագույն գործելակարգերի օրենսգրքի» Բաժին II.2.բ-ում նշված է՝ «ընտրական օրենքի հիմնարար տարրերը, մասնավորապես, ընտրական համակարգը, ընտրական հանձնաժողովների անդամները և ընտրատարածքների սահմանների որոշումը չպետք է փոփոխության ենթարկվեն ընտրություններից մեկ տարի առաջ»:

4 Տե՛ս ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի միացյալ կարծիքները Հայաստանի ընտրական օրենսդրության վերաբերյալ:

դիմումներին ու բողոքներին առնչվող կարևոր դրույթները: Ի լրումն, Օրենսգիրքը նախատեսում է ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակում, ընտրության օրն ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումների և տեսանկարահանող սարքերի (SU) կիրառում՝ ընտրողների ինքնությունը վավերացնելու և բազմակի քվեարկությունները, այլ անձի փոխարեն քվեարկելը և կեղծիքները կանխելու նպատակով:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ Եվրոխորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախկինում արված որոշ հանձնարարականներ հաշվի չեն առնվել. ներառյալ այն հանձնարարականները, որոնք առնչվում են ընտրախախտումների մասին բողոքներ ներկայացնելու իրավունքի խիստ նեղ մոտեցմանը, թեկնածուների քաղաքացիության եւ մշտական բնակության պահանջներին, Սահմանադրության պահանջին համապատասխան, խորհրդարանում մանդատներ ստանալու համար դաշինքներին վերաբերող ընտրական արգելապատնեշին, թեկնածուների ցուցակներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ ընդգրկվելուն եւ քարոզարշավի ֆինանսական հաշվետվություններում կազմակերպչական ծախսերը չընդգրկելուն:

ՄԸԴԱ-ի զրուցակիցների մի մասը մտահոգություն է հայտնել նաև ընտրական խրթին ընթացակարգերի, ընտրատեղամասերում տեղական դիտորդների և լրագրողների թույլատրելի թվի սահմանափակման և ստորագրված ընտրացուցակներից անզգուշությամբ կամ դիտավորությամբ ոչ ճիշտ տեղեկություններ հայտնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելու առնչությամբ[5]: Այս հարցերից մի քանիսը խնդրահարույց դարձան այս ընտրությունների ժամանակ:

Ընտրական նոր համակարգը բազմակողմանի է, բայց՝ խրթին: Առնվազն 101 պատգամավոր ընտրվելու է երկաստիճան համամասնական ընտրակարգով՝ միասնական համապետական ցուցակից եւ 13 տարածքային ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուներից[6]: Մանդատներ ստանալու համար քաղաքական կուսակցությունները պետք է հաղթահարեն հինգ տոկոսի, իսկ կուսակցությունների դաշինքները՝ յոթ տոկոսի արգելապատնեշը: Առավել մեծ թվով ազգային փոքրամասնությունների համար (եզդիներ, ռուսներ, ասորիներ եւ քրդեր) համակարգը նախատեսում է ընդհանուր առմամբ չորս մանդատ: Ընտրական օրենսգրքի համաձայնէ կառավարություն ձևավորելու համար պետք է ունենալ «կայուն խորհրդարանական մեծամասնություն» (որը սահմանվել է որպես բաշխված մանդատների ընդհանուր թվի 54 տոկոս)[7]: Եթե ընտրությունների արդյունքների վերջնական ամփոփումից հետո չի ձեւավորվում կայուն մեծամասնություն կամ հետագայում՝ 6 օրվա ընթացքում քաղաքական կոալիցիա չի կազմվում, քվեարկության օրվանից հետո՝ 28-րդ օրը կարող է անցկացվել երկրորդ փուլ, որին մասնակցելու են այն երկու կուսակցությունները

---

5 Հնարավոր պատժամիջոցը է 2-5 տարով ազատազրկումը:

6 Ընտրաթերթիկի մի մասում ընդգրկված է փակ համապետական ցուցակը, իսկ մյուսում՝ տարածքային բաց ցուցակը: Տարածքային թեկնածուները պետք է լինեն նաև համապետական ցուցակում: Ի լրումն համապետական ցուցակի ընտրության, ընտրողը կարող է նախապատվություն տալ տարածքային թեկնածուներից որևէ մեկին:

7 Լրացուցիչ մանդատները կարող են տրամադրվել այն քաղաքական կուսակցությանը կամ կոալիցիային, որը ստացել է ձայների բացարձակ մեծամասնություն՝ «կայուն խորհրդարանական մեծամասնությանը» հասնելու համար:

(կուսակցությունների դաշինքները), որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: ՄԴԱ-ի որոշ զրուցակիցներ քննադատել են ընտրական համակարգի բարդությունը և դրա շեղումները զուտ համամասնական համակարգից և մտահոգություն հայտնել, որ բավարար ջանքեր չեն գործադրվել հանրությանը իրազեկելու, թե ինչպես են քվեները վերածվելու մանդատների:

Ընտրությունների կազմակերպումը

Ընտրությունների վարչարարությունն անց է կացվել եռաստիճան համակարգով, որում ընդգրկված էր ԿԸՀ-ն, 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸԸՀ-ներ) և 2,009 Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ-ներ): ԿԸՀ-ն մշտապես գործող եւ պրոֆեսիոնալ մարմին է՝ կազմված յոթ անդամից, որոնք ընտրվում են խորհրդարանի կողմից վեց տարի ժամկետով: ԿԸՀ-ի բոլոր անդամները վերընտրվել են 2016 թվականի հոկտեմբերին՝ խորհրդարանի պատգամավորների ձայների ճնշող մեծամասնությամբ[8]:

ԿԸՀ-ն աշխատել է թափանցիկ և ընդհանուր առմամբ գործել է կոլեգիալ և արդյունավետ, պահպանելով օրենսդրական վերջնաժամկետները, սակայն ԿԸՀ-ն պատշաճ կերպով չի քննարկել բողոքները: ԿԸՀ-ի նիստերին ներկա են գտնվել դիտորդներ, լրատվամիջոցների և կուսակցությունների ներկայացուցիչներ և դրանք հեռարձակվել են առցանց: Որոշումները և օրակարգերը ժամանակին հրապարակվել են ԿԸՀ-ի վեբկայքում: ԿԸՀ-ն հաստատել է ՏԸՀ-ների, ԸԸՀ-ների ընթացակարգերի կանոններ և ուղեցույցներ՝ դիտորդների և վստահված անձանց համար: Նախկինում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից արված հանձնարարականների համաձայն, նոր Ընտրական օրենսգիրքը լիազորում է ԿԸՀ-ին արձակել իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող հրահանգներ՝ օրենքի միանման կիրառումն ապահովելու համար: Այնուամենայնիվ, դրա փոխարեն ԿԸՀ-ն նախընտրեց հրապարակել պարզաբանումներ ավելի ստորին մակարդակի անձնաժողովների համար, որոնք իրավաբանորեն ենթակա չեն պարտադիր կատարման՝ այսպիսով նվազեցնելով իրավական որոշակիությունը[9]:

ԿԸՀ-ն ընտրողների համար պատրաստել և տարածել էր ընտրության օրվա նոր ընթացակարգերի վերաբերյալ տպագիր և աուդիո-վիդեո բազմաբնույթ ուսուցողական նյութեր, որոնց որակը դրական գնահատական է ստացել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից: Այնուամենայնիվ, տպագիր նյութերը բավարար չէին՝ հեռավոր շրջանների քվեարկողներին բաշխելու համար: Մատչելի ձևափաչով նյութեր են տրամադրվել

---

8 ԿԸՀ-ի կազմը մտահոգության տեղիք է տվել քաղաքացիական հասարակության շրջանում, որը պայմանավորված է նախորդ ընտրություններում ԿԸՀ-ին վատ աշխատանքի մասին ենթադրություններով: Տասնյոթ քաղաքացիական կազմակերպություններ հրապարակել են ԿԸՀ-ի կազմի նշանակումը քննադատող համատեղ հայտարարություն:

9 Մարտի 28-ին Վարչական դատարանը որոշում կայացրեց առ այն, որ ԿԸՀ-ի՝ քվեաթերթիկների անվավերության վերաբերյալ պարզաբանումները չունեն պարտադիր իրավաբանական ուժ, և, հետևաբար, բողոքարկման ենթակա չեն: ԿԸՀ-ը նույնպես հայտնեց ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի զրուցակիցներին, որ իրենց պարզաբանումները պարտադիր ուժ չունեն ՏԸՀ-ների համար:

հաշմանդամություն ունեցող անձանց համար[10]: Ընտրողներին ուսուցանող որևէ նյութ չի պատրաստվել ազգային փոքրամասնությունների լեզուներով:

ԸԸՀ-ները, որոնք ձեւավորվել են 2016 թ., պրոֆեսիոնալ մարմիններ են, բաղկացած յոթ անդամից, որոնք նշանակվում են ԿԸՀ-ի կողմից վեց տարի ժամկետով: ԸԸՀ-ները պատասխանատու են ՏԸՀ-ների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, ՏԸՀ-ներին առնչվող բողոքների քննարկման, վերահաշվարկի եւ արդյունքների աղյուսակավորման համար[11]: ՏԸՀ-ները կազմավորվել են մարտի 11-ին՝ քվեարկությունը և քվեների հաշվարկը կազմակերպելու համար[12]: Թեպետ ՄԸԴԱ-ի զրուցակիցներից շատերը վստահություն հայտնեցին ԸԸՀ-ների աշխատանքի վերաբերյալ, սակայն ՏԸՀ-ների անաչառությունը վստահություն չի ներշնչում, քանի որ հանձնաժողովների ղեկավար պաշտոնները բաշխվել են ի օգուտ իշխող կուսակցությունների[13]: ԿԸՀ-ի կողմից տեղամասային հանձնաժողովների համար կազմակերպված ուսուցողական դասընթացներն ընդհանուր առմամբ դրական են գնահատվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից: Այնուամենայնիվ, ընտրությունների օրվա ընթացակարգերի բարդությունը մտահոգություններ է առաջացնում՝ ՏԸՀ-ների կողմից՝ դրանք կազմակերպելու կարողության վերաբերյալ:

Կանանց ներկայացուցչությունը ապահովված է ընտրական հանձնաժողովներում: ԿԸՀ-ի յոթ անդամներից երեքը կին են, ներառյալ նախագահի տեղակալը: Կանայք կազմում են ԸԸՀ-ի անդամների 35 տոկոսը, սակայն նրանց միայն 16 տոկոսն են զբաղեցնում ղեկավար պաշտոններ[14]: ՄԸԴԱ-ի դիտորդները արձանագրել են ՏԸՀ հանձնաժողովներում կանանց ավելի մեծ չափով համամասնություն (57 տոկոս, ներառյալ 39 տոկոսը՝ նախագահի պաշտոնում)[15]:

Ընտրողների գրանցումը

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, բացառությամբ

---

10 Տեսանյութերում օգտագործվում է ժեստերի լեզուն, իսկ ընտրական ընթացակարգերի մասին ուղեցույցները գրված են մեծ չափի տառերով և Բրեյլի այբուբենով:

11 ԸԸՀ-ի անդամներն ընտրվում են ինքնաառաջադրված համապատասխան որակավորում ունեցող թեկնածուներից:

12 Յուրաքանչյուր ՏԸՀ-ում խորհրդարանական յուրաքանչյուր կուսակցություն կամ կոալիցիա նշանակում է մեկ անդամ, իսկ համապատասխան ԸԸՀ-ն՝ երկու անդամ:

13 ՏԸՀ-ների նախագահների և քարտուղարների պաշտոնները բաշխվել են համամասնորեն՝ ըստ խորհրդարանում կուսակցությունների ունեցած ներկայացվածության: Արդյունքում, 2,009 ՏԸՀ-ներից 1,786 հանձնաժողովներում ՀՀԿ-ն ուներ կամ նախագահ կամ քարտուղար: ԲՀԿ-ն ղեկավար պաշտոններ ուներ 1,250 ՏԸՀ-ներում, իսկ մնացած խորհրդարանական կուսակցություններից յուրաքանչյուրն ուներ ոչ ավելի, քան 300 ղեկավար պաշտոն:

14 Օրենքով ԸԸՀ-ի անդամներից առնվազն երկուսը պետք է լինեն հակառակ սեռի ներկայացուցիչ: ՏԸՀ-ների համար չկան գենդերային պահանջներ:

15 ԿԸՀ-ն չունի ՏԸՀ-ների կազմի գենդերային համամասնության առանձնացված տվյալներ:

դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձանց[16]: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրոխորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախկինում արված հանձնարարականներին համահունչ՝ բարեփոխված Սահմանադրությունը վերապահում է ընտրելու իրավունք ոչ ծանր և միջին հանցագործությունների համար դատապարտվածներին: Ընտրողների գրանցումն իրականացվում է պասիվ եղանակով, եւ ընտրողների ցուցակները հիմնված են Բնակչության պետական ռեգիստրի տվյալների վրա, որը գտնվում է Ոստիկանության Անձնագրային եւ վիզաների վարչության (ԱՎՎ) վերահսկողության ներքո եւ ներառում է Հայաստանում մշտական բնակություն ունեցող բոլոր ընտրողներին[17]: Ընրողների ռեգիստրում՝ մարտի 28-ի դրությամբ, առկա էին ընդհանուր թվով 2,654,195 ընտրող, այդ թվում՝ արտասահմանում բնակվող և պաշտոնապես Հայաստանի քաղաքացիություն ունեցող զգալի թվով ընտրողներ[18]: Ի լրումն, առկա են հատուկ ցուցակներ զինծառայողների, դատապարտված կամ կալանավորված ընտրողների համար[19]:

Միջգերատեսչական համագործակցությունը, ներառյալ համակարգչային համակարգերի օգտագործումը և ԱՎՎ-ի և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմերի միջև հաղորդակցության բարելավումը նպաստեցին ընտրողների ցուցակների ճշգրտությանը և համընդգրկունությանը, ներառյալ ցուցակներից մահացած անձանց անունները հանելուն: Ընտրական օրենսգիրքը ընտրողների համար նախատեսում է բավարար մեխանիզմներ ԱՎՎ-ին ճշգրտումներ կատարելու խնդրանքով դիմելու դեպքում[20]: Այնուամենայնիվ, ընտրողների ցուցակներում դեռևս պահպանվում են հասցեներ, որտեղ հաշվառված են մեծ թվով ընտրողներ, ինչը պահանջում է հետագա մանրակրկիտ ստուգում իշխանությունների կողմից[21]:

Ի պատասխան ընդդիմության և քաղաքացիական հասարակության տևական պահանջների ընտրության օրն այլ անձի փոխարեն քվեարկությունը կանխելու նպատակով իրականացվել են զգալի միջոցառումներ գրանցման գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար: Փետրվարի 21-ին և մարտի 30-ին ընտրողների նախնական և վերջնական ցուցակները համապատասխանաբար, փակցվեցին

---

16 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի Հոդված 29-ի համաձայն՝ պետությունները պետք է «երաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և մյուսների հետ հավասար հիմքով դրանք իրացնելու հնարավորությունը»:

17 Մշտական բնակության հասցե չունեցող և անտուն քվեարկողները կարող են գրանցվել քվեարկության համար՝ դիմելով ԱՎՎ: Այս ընտրությունների համար նման դիմումներ են ներկայացրել ընդհանուր թվով 915 քվեարկողներ:

18 2011 թվականի մարդահամարի համաձայն, Հայաստանում փաստացի բնակվում են 18 տարին լրացած ընդհանուր թվով 2,190,686 քաղաքացի:

19 Քվեարկության համար գրանցվել էին 1,480 նախնական կալանքում գտնվող և դատապարտված անձինք: Օրենքի համաձայն՝ զինծառայող քվեարկողների մասին տեղեկատվությունը, ներառյալ նրանց ընդհանուր թիվը հրապարակման ենթակա չէ:

20 Մինչև մարտի 23-ն ընտրողները կարող էին դիմել ճշգրտումների, իրենց՝ ընտրողներին ընտրացուցակներում ներառելու և հանելու համար, սակայն քիչ թվով ընտրողներ են ներկայացրել նման դիմումներ: Ընտրության օրն ընտրացուցակում ընտրողներին կարելի է ավելացնել միայն ԱՎՎ-ի կամ դատարանի համապատասխան որոշման հիման վրա:

21 Օրինակ, առկա են 2,500 հասցեներ, որտեղ նույն հասցեում գրանցված են 15 կամ ավելի քվեարկողներ:

ընտրատեղամասերում՝ հանրության կողմից դրանք մանրամասն ուսումնասիրելու համար: Օրենքի պահանջներին համապատասխան, ԱՎՎ-ն նույնպես հրապարակեց ընտրողների նախնական և վերջնական ամբողջական ցուցակները իր վեբկայքում: Ի լրումն, ԿԸՀ-ն նախատեսում է մինչև ապրիլի 3-ը հրապարակել բոլոր ՏԸՀ-ների ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորված պատճենները, ինչը թույլ կտա հասարակությանը ստուգել, թե այն անձինք, ովքեր ենթադրվում է, որ գտնվում են արտերկրում քվեարկել են, թե ոչ[22]: ՄԸԴԱ-ի բոլոր զրուցակիցները դա դիտարկում էին որպես կարևոր զսպիչ գործոն՝ հնարավոր կեղծիքների կանխարգելման հարցում՝ չնայած այն մտահոգություններին, որ կբացահայտվեն ընտրողների անձնական տվյալները: Այնուամենայնիվ, նման քայլերը չպետք է հետ պահեն իշխանություններին արդյունավետ գործողություններ ձեռնարկելուց այն անձանց նկատմամբ, ովքեր ներգրավված են ընտրական խախտումներ կատարելու մեջ:

Ընտրելու իրավունքի իրականացումը հեշտացնելու նպատակով, ընտրողները հնարավորություն ունեին փոխել իրենց հաշվառումը՝ ժամանակավորապես հաշվառվելով այն հասցեում, որտեղ նրանք գտնվելու էին ընտրության օրը[23]: Այնուամենայնիվ, մի քանի քաղաքական կուսակցություններ և ՀԿ-ներ մտահոգություն էին հայտնել, որ տարածքային որոշ թեկնածուներ ընտրողների վրա ճնշում են գործադրում՝ ստիպելով նրանց վերագրանցվել թեկնածուների առաջադրված տարածքներում: ԱՎՎ-ի աշխատակիցները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնել են, որ ընտրողների կազմակերպված տեղափոխություններ, ինչպես նաև ընտրողների վերագրանցումներ այլ բնակավայրերում տեղի չեն ունեցել:

Այլ անձի փոխարեն քվեարկելու և ընտրացուցակներում կեղծ գրանցումներ կատարելու հնարավոր կեղծիքները կանխելու համար, որպես լրացուցիչ միջոց, ընտրության օրը ընտրողների ինքնությունը հաստատվել է ԸՆՍ-ների միջոցով, որոնք պարունակում էին ընտրացուցակների էլեկտրոնային տարբերակները[24]: Ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը սկանավորվել են, որպեսզի որոշվի, թե արդյոք ընտրողը գրանցված է տվյալ ընտրատեղամասում, թե ոչ, և արդյոք ընտրողը համակարգում արդեն իսկ նշված է որպես քվեարկած անձ: Սկանավորվել են նաև ընտրողների մատնահետքերը, և ԿԸՀ –ն հայտնել էր ՄԸԴԱ-ին, որ բողոքներ ստանալու դեպքում նախատեսում է անցկացնել խաչաձև ստուգումներ՝ բազմակի քվեարկության հնարավոր դեպքերը հայտնաբերելու համար:

ՄԸԴԱ-ի զրուցակիցներից շատերը ողջունել են ԸՆՍ-երի ներդրումը՝ որպես օգտակար մեխանիզմ ընտրության օրվա ընթացակարգերի նկատմամբ վստահություն ներշնչելու գործում: Այնուամենայնիվ, ԸՆՍ-երի ուշ տեղադրումը հանգեցրեց սարքավորումների

---

22 ՏԸՀ-ների կողմից ստորագրված քվեարկողների ցուցակներն ապրիլի 3-ին կսկանավորվեն ԸԸՀ-ների կողմից՝ ԿԸՀ-ի վեբկայքում հետագայում հրապարկելու համար:

23 Նման դիմումներ են ներկայացրել 28,277 ընտրողներ, ներառյալ ընտրական տեղամասերում հերթապահության մեջ գտնվող ոստիկաններ և ընտրատեղամասերում ՏՀԸ-ի անդամները, ովքեր իրենց տեղամասից դուրս են գտնվում:

24 Ընտրական գործընթացում նոր տեխնոլոգիաների ներդրմանը մեծապես սատարում էին ընդդիմությունը և քաղաքացիական հասարակությունը: Տեխնիկական աջակցությունը տրամադրվել է ՄԱԶԾ-ի կողմից:

փորձարկման և օպերատորների ուսուցման ժամանակի սահմանափակման[25]: Ի լրումն, արտահայտվեցին մտահոգություններ կապված ԸՆՍ-երի գործառնության և ընտրազանգվածի կողմից դրանց օգտագործման մանրամասների մասին տեղեկացվածության վերաբերյալ[26]:

Թեկնածուների գրանցումը

Համընդգրկուն գործընթացում ԿԸՀ-ն գրանցել է հինգ քաղաքական կուսակցությունների և չորս կուսակցական դաշինքների թեկնածուների ցուցակները՝ ընդհանուր առմամբ 1,558 թեկնածուներ[27]: Պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի քաղաքացի հանդիսացող եւ մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող եւ հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք[28]: Հաշվի առնելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրոխորհրդի Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականները, լեզվի թեստը կազմվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ ողջամիտ և օբյեկտիվ չափանիշների հիման վրա: Թեկնածուների համար նախատեսված սահմանափակումը, որը բխում է այլ պետության քաղաքացի լինելու հանգամանքից, հակասում է միջազգային իրավական պրակտիկային[29]:

Թեկնածուների ցուցակները կարող են ներկայացվել քաղաքական կուսակցությունների և կուսակցական դաշինքների կողմից: Թեկնածուների ցուցակները ներկայացվել են քաղաքական կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքների կողմից եւ ներառել են կուսակցության անդամ չհանդիսացող անձանց, սակայն օրենքը չի նախատեսում անհատ թեկնածուների առաջադրման հնարավորություն[30]: Յուրաքանչյուր մասնակից ներկայացնում է ոչ պակաս քան 80 թեկնածուների միասնական համապետական ցուցակ եւ 13 տարածքներին համապատասխանող ընտրական ցուցակ[31]: Միայն ՀՎ-ն, ՀԱԿ/ՀԺԿ-ն, ՀՀԿ-ն եւ ԾԴ-ն թեկնածուներ են առաջադրել ազգային փոքրամասնության ցուցակում: ՄԸԴԱ-ի հետ հանդիպած որոշ կուսակցություններ նշել էին, որ դժվար է գտնել ազգային փոքրամասնության

25 Մարտի 25-ին ԿԸՀ-ն կազմակերպեց ԱՆՍ-երի հանրային ցուցադրություն, որին ներկա էին լրատվամիջոցների և միջազգային հանրության ներկայացուցիչներ:

26 Մարտի 18-ին ԱՆՍ-երի ծրագրի վերջնական տարբերակը ներկայացվել է ԿԸՀ-ին: Ընդհանուր առմամբ ընտրողները հնարավորություն չեն ունեցել ծանոթանալ ԱՆՍ-ների հետ մինչև քվեարկության օրը:

27 ՀԾ, ՀՅԴ, Հայաստանի կոմունիստական կուսակցություն (ՀԿԿ), Կոնգրես – Հայկական ժողովրդավարական կուսակցության դաշինք (ՀԱԿ-ՀԺԿ), Ազատ դեմոկրատներ (ԱԴ), Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան դաշինք (ՕՌՕ), ՀՀԿ, Ծառուկյան դաշինք (ԾԴ) և Ելք դաշինք:

28 Լեզվի իմացությունը կարող է հաստատվել կամ միջնակարգ կամ բարձրագույն կրթության առկայության դեպքում կամ թեստավորման միջոցով: Լեզվի թեստավորում անցնելու համար դիմած բոլոր 11 թեկնածուները ստացել են լեզվի իմացության հավաստագրեր:

29 Տենասին ընդդեմ Մոլդովայի գործով (դիմում թիվ 7/08, 2010 թվականի ապրիլի 27), ՄԻԵԴ-ը նշեց, որ «եթե թույլատրված է մի քանի քաղաքացիություն, ապա մեկից ավելի քաղաքացիություն ունենալը չպետք է հիմք դառնա խորհրդարանի անդամ դառնալու իրավունքից զրկվելու համար»:

30 Ըստ ԿԸՀ-ի, առաջադրված թեկնածուների 15 տոկոսը չեն հանդիսանում իրենց առաջադրած կուսակցությունների անդամներ:

31 Տարածքային ցուցակում կարող էր ընդգրկվել առավելագույնը մեկ թեկնածու՝ 15,000 ընտրողների համար: Տարածքային թեկնածուները պետք է ընդգրկված լինեն նաև համապետական ցուցակում: Տարածքային թեկնածուների առավելագույն թիվը տատանվում էր 7-ից մինչև 15-ը:

թեկնածուներ, ովքեր հավատարիմ չէին իշխող կուսակցությանը: Ընտրություններին մասնակցող կուսակցությունները եւ դաշինքները վճարել են դրամական գրավ, որը ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի 4 կամ ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստանալու դեպքում վերադարձվում է[32]:

Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները գործել են Ընտրական օրենսգրքի այն իրավական պահանջին համապատասխան, ըստ որի համապետական ցուցակներում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է լինի 25% -ից պակաս, եւ յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչ պետք է ներկայացված լինի ցանկացած ամբողջ թվով քառյակներում: Որպես դրական զարգացում և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի նախկինում արված հանձնարարականներին համահունչ, գենդերային քվոտան գործում է և՛ գրանցման, և՛ բաշխման, և՛ թափուր մանդատների լրացման դեպքում: Գրանցված թեկնածուների գրեթե 30 տոկոսը կանայք են:

Նախընտրական քարոզարշավ

Պաշտոնական քարոզարշավը մեկնարկել է մարտի 5-ին եւ ավարտվում է քվեարկության օրվանից 24 ժամ առաջ՝ ապրիլի 1-ին: Քարոզարշավի մեկնարկը դանդաղ էր և ակտիվացավ ընտրության օրվան ընդառաջ[33]: Ելնելով առկա ռեսուրսներից՝ կուսակցությունները քարոզչությունն իրականացրեցին հանրահավաքների, ավտոմեքենաներով երթերի, դռնից դուռ քարոզչությամբ, պաստառների, լրատվամիջոցներում գովազդների և սոցիալական մեդիայի միջոցով: Մեծամասամբ քարոզչությունը կենտրոնանում էր անհատ թեկնածուների, քան քաղաքական հարթակների և քաղաքականության վրա: Կանայք ակտիվ էին որպես թեկնածուներ, սակայն կուսակցության հարթակներն անմիջականորեն չէին ներառում գենդերային հավասարությանը վերաբերող հարցեր[34]: Մասնակիցները հիմնականում կարողացան քարոզչություն իրականացնել առանց որևէ սահմանափակման, սակայն հաղորդումներ տարածվեցին երկրի որոշ մասերում բռնության առանձին դեպքերի մասին[35]:

Վարչական ռեսուրսների չարաշահումը կանխելու նպատակով Ընտրական օրենսգիրքնը արգելում է պետական ծառայողներին կատարել քարոզչություն իրենց պաշտոնական լիազորություններն իրականացնելիս զուգահեռ և օգտագործել պետական շենքերը քարոզչության համար: Դրական է նաև այն, որ մարզերում քարոզչության մեջ ներգրավված պետական ծառայողներից շատերն արձակուրդ էին վերցրել այդ նպատակով, մինչդեռ բարձրաստիճան պետական պաշտոնյաները,

32 Գրավը կազմում է 10 մլն ՀՀ դրամ (մոտ 19,450 եվրո): 1 եվրոն մոտավորապես 514 ՀՀ դրամ է:

33 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկվել է ընդհանուր թվով 99 ընտրարշավներ ողջ երկրում:

34 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքներին համապատասխան ամենադիտվող լրատվական հաղորդումների ընթացքում կին քաղաքական գործիչները ստացել են ընդամենը 9 տոկոս քարոզչական լուսաբանում:

35 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ստացել է ահազանգեր Արագածոտնի, Արարատի ր Արմավիրի մարզերից:

ներառյալ վարչապետը, հիմնականում քարոզչություն էր իրականացնում ոչ աշխատանքային օրերին[36]:

Երկրի ողջ տարածքում մեղադրանքներ են հնչել որոշակի կուսակցությունների կողմից ի օգուտ իրենց քվեարկելու համար ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի բազմաթիվ արժանահավատ հաղորդագրություններ է ստացել անմիջապես հանրության կողմից[37]: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի մի քանի զրուցակիցներ, ներառյալ որոշ պետական ծառայողներ, մատնանշեցին, որ ընտրակաշառք բաժանելը դարձել է քաղաքական մշակույթի անբաժանելի մասը, նշելով, որ գումար վերցնելը կամ ձայնի դիմաց որևէ օգուտ ստանալը հաճախ հիմնավորվում է ծայրահեղ աղքատությամբ և տնտեսական հնարավորությունների բացակայությամբ: Այդ պատճառով ստեղծվել է մի մթնոլորտ, երբ հանրության վստահությունը ընտրական գործընթացի հանդեպ խաթարվել է:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նաև արժանահավատ հաղորդումներ է ստացել ընտրողների՝ հատկապես մասնավոր և պետական հատվածի աշխատողների հանդեպ ճնշումների գործադրման և ահաբեկման մասին[38]: Իրազեկ քաղաքացիների միավորումը ներկայացրել է ձայնագրություններ՝ համաձայն որոնց 114 դպրոցների տնօրեններ ընդունում են, որ պատրաստել են ՀՀԿ-ին աջակցող ուսուցիչների և աշակերտների ծնողների ցուցակներ: Այնուհետև, այդ ցուցակները ներկայացվել են տեղական իշխանություններին: Երկու քաղաքական կուսակցություններ բողոք ներկայացրեցին ԿԸՀ-ը՝ պնդելով, որ դա վարչական ռեսուրսների չարաշահում է[39]: Թեպետ ընտրողները ընդհանուր առմամբ ազատ էին բոլոր մրցակիցների մասին տեղեկություններ ձեռք բերելու հարցում, սակայն որոշ ընդդիմադիր կուսակցություններ ՄԸԴԱ-ին հայտնեցին,

36 Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզպետները, Ագարակի (Մեղրի) և Հրազդանի քաղաքապետերը և Կոտայքի մարզի երեք փոխմարզպետներն արձակուրդ էին վերցրել՝ ամբողջ օրը քարոզչությամբ զբաղվելու համար:

37 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արժամնահավատ հաղորդումներ է ստացել այն մասին, որ Սյունիքի մարզպետը խոստացել է պարգևատրել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հանքարդյունաբերական ընկերության այն աշխատակիցներին, ովքեր կքվեարկեն ՀՀԿ-ի օգտին, ՀՀԿ-ն գումար է առաջարկել ուսուցիչներին Կոտայքում և Սյունիքում, ԾԴ-ն նույնպես գումար է առաջարկել Սյունիքի ընտրողներին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԵԴԱ-ն ստացել էր նաև բազմաթիվ ուղղակի հաղորդումներ մարզերում բնակվող անձնացից այն մասին, որ նրանք գումար են ակնկալում իրենց ձայնի համար:

38 Մի քանի պետական ծառայողներ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնել են, որ մարտի 15-ին Սյունիքի մարզպետը նրանց հրահանգել էր քվեարկել ՀՀԿ-ի օգտին: Կապանի մշակույթի տան ղեկավարը իր աշխատակիցներից պահանջել է կազմել ՀՀԿ-ին աջակցողների ցուցակներ: Սյունիքում ուսուցիչներին սպառնացել են, որ եթե նրանք չքվեարկեն ՀՀԿ-ի օգտին, ապա կազատվեն աշխատանքից: Ուսուցիչների, բժիշկների և պետական հատվածի այլ ծառայողների վերադասները նրանց հրահանգել են մասնակցել Արմավիրում ՀՀԿ-ի թեկնածուի հանդիպումներին: Երևանում գործող մասնավոր մի ընկերության սեփականատեր սպառնացել է իր աշխատակիցներին, որ նրանք կազատվեն աշխատանքից, եթե իրեն չներկայացնեն ՀՀԿ-ի բավական թվով պոտենցյալ աջակիցների ցուցակներ:

39 ՀՀԿ ընդունեց, որ տեղի է ունեցել անվանացուցակների կազմում, բայց պնդեց, որ դա օրինական քարոզչություն է, քանի որ տեղի է ունեցել ոչ աշխատանքային ժամերին: *Տե՛ս Բողոքներ և դիմումներ*:

որ իրենց աջակիցների վրա ճնշումներ են գործադրվել՝ չմասնակցելու իրենց հավաքներին[40]:

Հավաքաբար, ձայներ գնելու, ընտրողների վրա ճնշումներ և բռնություններ գործադրելու լայնատարած մեղադրանքները բացասական ազդեցություն են թողել քարոզարշավի վրա և խնդրահարույց են դարձրել ընտրողների կարողությունը՝ քվեարկել ազատորեն, չվախենալով հաշվեհարդարից, որը հակասում է ԵԱՀԿ Կոպենհագենի 1990 թվականի փաստաթղթի 7.7 կետին[41]:

Քարոզարշավի ֆինանսավորում

Օրենքի համաձայն՝ բոլոր մասնակիցները բացել են հատուկ հաշվեհամար՝ իրենց քարոզչության ֆինանսավորման հետ կապված գործարքները իրականացնելու համար, որոնք ձևավորվում են ընտրողների կամավոր մուծումներից եւ կուսակցությունների ու թեկնածուների անձնական միջոցներից[42]: Չեն թույլատրվում մուծումներ՝ կատարված իրավաբանական անձանց, ինչպես նաեւ օտարերկրյա եւ անանուն աղբյուրների կողմից: Օրենքը սահմանափակում է քարոզչական ծախսերը յուրաքանչյուր մասնակցի համար 500 մլն ՀՀ դրամի չափով՝ առաջին փուլի համար:

Հետևելով ԵԱԳԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախորդ հանձնարարականներին՝ խստացվել են քարոզարշավի ֆինանսավորման հաշվետվությունների ներկայացման և վերահսկողության վերաբերյալ որոշ օրենսդրական դրույթներ[43]: Ընտրական օրենսգրքի համաձայն, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (ՎՎԾ) պետք է անկախ լինի ԿԸՀ-ից, սակայն ՎՎԾ-ի ղեկավարին նշանակում է ԿԸՀ-ն, և օրենքով հստակորեն չի սահմանվում վերջինիս ինստիտուցիոնալ կարգավիճակը կամ աշխատակարգը: Ի լրումն, ՎՎԾ-ն չի կարող ինքնուրույն նախաձեռնել որևէ վարչական վարույթ կամ բողոքարկել ԿԸՀ-ի որոշումը: Խորհրդարանական կուսակցությունների կողմից նշանակվել են վեց աուդիտորներ ՎՎԾ-ի հետ աշխատելու համար, սակայն նրանց գործունեությունը բավարար չափով չի

40 ՀԱԿ-ՀԺԿ-ի, ՕՐՕ-ի և ԵԼՔԻ ներկայացուցիչները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեցին, որ նրանց աջակիցներին թույլ չեն տվել մասնակցել այդ հավաքներին:

41 1990 թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերությունը է պահանջում է մասնակից պետություններին «ապահովել, որ օրենքն ու պետական քաղաքականությունը թույլ տան քաղաքական համաշարժումների անցկացում ազատության ու ազնվության մթնոլորտում, ոչ մի վարչական գործողություն, բռնություն կամ ահաբեկում կուսակցություններին ու թեկնածուներին հետ չեն պահի իրենց հայացքներն ու գնահատականներն ազատորեն շարադրելուց, ինչպես նաև ընտրողներին չեն խանգարի ծանոթանալ դրանց և քննարկել դրանք կամ քվեարկել ազատորեն, երկյուղ չկրելով պատժից:

42 Համապատասխանաբար 500,000 ՀՀ դրամ, 5 միլիոն ՀՀ դրամ և 100 միլիոն ՀՀ դրամ: Օրենքը հստակորեն չի կարգավորում բնեղեն նվիրատվություններ ընդունելու կարգը:

43 Տես նաև the 2014 GRECO Second Compliance Report on Transparency of Party Funding in Armenia.

կարգավորվում կամ հետևողականորեն չի իրականացվում[44]: Ընդհանուր առմամբ, ՎՎԾ-ն չի դրսևորել ակտիվ մոտեցում քարոզարշավի ֆինանսավորումը վերահսկելու համար:

Մասնակիցները ներկայացրել են երկու ֆինանսական հայտարարագիր մինչև քվեարկության օրը՝ հայտարարագրելով նվիրատվությունները և ծախսերը[45]: ՎՎԾ-ն չբացահայտեց քարոզարշավի ֆինանսավորման չարաշահումներ և ԿԸՀ-ի կայքում[46] հրապարակեց տեղեկություններ բոլոր մասնակիցների ընդհանուր եկամուտների և ծախսերի մասին[47]: Յուրաքանչյուր երեք օրը մեկ Կենտրոնական Բանկը ՎՎԾ-ին է տրամադրել նվիրատուների ցուցակները, սակայն այս տեղեկությունները չեն հրապարակվել: Չնայած ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ նախկինում արված հանձնարարականի, այսպես կոչված շտաբերի, տրանսպորտի եւ հաղորդակցման հետ կապված կազմակերպչական ծախսերը չեն ներառվում հայտարարագրերում: Այդ գործոնները նվազեցնում են քարոզարշավի ֆինանսավորման համակարգի թափանցիկությունը և արժանահավատությունը[48]:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Խոսքի ազատությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և լայնորեն կիրառվել է: Հայաստանում գործում են բազմաթիվ լրատվամիջոցներ, սակայն լրատվական միջավայրը բնութագրում է որպես սահմանափակ և քաղաքական առնչություն ունեցող գովազդային շուկա, որը հնարավորություն է տալիս գործելու միայն մի քանի ինքնաբավ լրատվամիջոցի: Հաղորդագրությունների համաձայն, խոշոր մասնավոր հեռուստատեսությունները ֆինանսավորվում են գործարարների կողմից՝ իրենց

---

44 Ընտրական օրենսգիրքը նածատեսում է, որ ՎՎԾ-ն պետք է ամփոփի հայտարարագրերը, մինչդեռ ՎՎԾ-ի գործունեության կարգը պահանջում է ստուգել այս հայտարարագրերը: ԿԸՀ-ի որոշումը Նախընտրական հյմնադրամներ կատարվող մուծումների և հիմնադրամից կատարվող ծախսերի հաշվառման կարգը սահմանելու մասին նախատեսում է, որ ՎՎԾ-ն պետք է կատարի խաչաձև ստուգումներ և վավերացնի ծախսերը: Այնուամենայնիվ, այս պահանջը չի իրականացվել: Չնայած որոշ առդիտորներ տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենք ուսումնասիրում են բոլոր ներկայացված զեկույցները, մնացածը ընտրողաբար դիտարկել են հայտարարագրերը առաջադրվող կուսակցության խնդրանքի համաձայն: ՎՎԾ տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենք չեն օգտվել իրենց այդ լիազորությունից՝ պահանջելու տեղեկատվություն այն ընկերություններից, որոնք մատակարարել են ապրանքներ և ծառայություն՝ գործարքների խաչաձև ստուգման համար:

45 Չնայած ԿԸՀ-ն նախատեսել է հայտարարագրի ձևաչափ, հայտարարագրերը միանամն չեն լրացվել մասնակիցների կողմից:

46 Զեկուցումների համապատասխան ՀՀԿ-ն ծախսել է մոտ 380մլն դրամ քարոզչական նպատակների համար, ԾԴ՝ մոտ 155մլն դրամ, ՕՐՕ՝ մոտ 89մլն դրամ, ՀՎ՝ մոտ 72մլն դրամ, իսկ մնացած կուսակցությունները միասնաբար ծախսել են մոտ 165մլն դրամ:

47 2002 թ. ԱՊՀ կոնվենցիան ժողովրդավարական ընտրությունների չափանիշների, ընտրական իրավունքների եւ ազատությունների Հոդվածը 12.5-ը սահմանում է, որ «քաղաքական կուսակցությունները պետք է ներկայացնեն տեղեկատվություն իրենց դոնորների եւ օգտագործված նախընտրական հիմնադրամների մասին եւ ընտրական մարմինները պետք է հրապարակեն այդ տեղեկությունը»:

48 2003 թվականի ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի Հոդված 7.3-ում նախատեսված է, որ պետությունները «պետք է ձեռնարկեն համապատասխան օրենսդրական և վարչական միջոցներ … բարելավելու ընտրովի պետական կառույցի թեկնածուների ֆինանսավորման թափանցիկությունը և, հնարավորության դեպքում նաև քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությունը»:

քաղաքական կամ առևտրային շահերը գովազդելու համար և ԸԴԱ-ի զրուցակիցների կողմից հաճախ ընկալվում են որպես կառավարության հետ փոխկապակցված: Լրատվամիջոցների իրական սեփականատերերի մասին տեղեկատվությունը թափանցիկ չէ[49]:

Լրագրողները ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ լրատվամիջոցների սեփականատերերի միջամտությունը իրենց խմբագրական աշխատանքի անկախությանը հանգեցնում է ինքնագրաքննության և ապաքաջալերում է կառավարության քննադատական լուսաբանումը, այդ թվում՝ Հանրային հեռուստատեսությամբ: Ընտրություններին առնչվող նորությունները, որոնք հանրային հետաքրքրություն են առաջացնում, այդ թվում՝ դպրոցների տնօրենների կողմից կազմված աջակիցների ցուցակների հրապարակումը, ԿԸՀ ներկայացված ընտրություններին առնչվող բողոքները չեն լուսաբանվել Հանրային հեռուստատեսության երեկոյան 21:00-ի լուրերի թողարկումներում, բայց լուսաբանվել են այլ լրատվամիջոցների կողմից: Լրագրողները նաև հայտնել են, որ վերջին ժամանակներում լրագրողների հանդեպ բռնության դեպքերը և դրանց անբավարար հետաքննությունը խաթարում է վերջիններիս անվտանգությունը և խոչընդոտում է նրանց աշխատանքը[50]: Համացանցային ազատության, ինչպես նաեւ առցանց լրատվական աղբյուրների նկատմամբ չկա միջամտություն, ինչը նպաստում է քաղաքական բազմակարծության եւ կառավարության գործունեության քննադատական լուսաբանման աճին: Որոշ առցանց լրատվամիջոցներ, որոնք ֆինանսավորվում են միջազգային դոնորների կողմից, ապահովում են խորքային եւ հետաքննական լրագրության հնարավորություն[51]:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ հանրային եւ մասնավոր հեռուստատեսություններով եւ ռադիոյով հեռարձակվող լրատվական ծրագրերը պետք է տրամադրեն “անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն” թեկնածուների քարոզարշավների վերաբերյալ: Այս դրույթը անորոշ է և չի հստակեցվել այն մարմնի կողմից, որին հանձնարարված է վերահսկել լրատվամիջոցներին առնչվող դրույթների իրականացումը քարոզարշավի ընթացքում, որն է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ): ԶԼՄ-ների ներկայացուցիչները տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ նրանք մեկնաբանում են այս դրույթը որպես յուրաքանչյուր հաղորդման շրջանակներում յուրաքանչյուր մասնակցին քարոզարշավի հավասար քանակությամբ լուսաբանման պարտավորություն և դժգոհում են, որ սա մեծապես սահմանափակում է քարոզարշավի լուսաբանումը: ՀՌԱՀ-ը չի տրամադրում որևէ

---

49 Թեպետ Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքի հոդված 18-ի համաձայն մեկ իրավաբանական անձը կարող է ունենալ մեկ հեռաստատեության և մեկ ռադիո կայանի լիցենզիա, սակայն օրենքը չի պահանջում, որ բացահայտվեն լրատվամիջոցների վերջնական և շահառու սեփականատերերը:

50 ԵԱՀԿ-ի մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչը կոչ է արել պաշտպանել լրագրողների իրավունքները և իրականացնել լրագրողների մասնակցությամբ միջադեպերի խորը հետաքննություն:

51 Օրինակ՝ Civilnet.am, Hetq.am և Ազատություն ռադիո կայանը:

ուղեցույց, այն մասին, թե ինչպես գնահատել լուսաբանման անհավասարությունը[52]:

Քարոզարշավի ընթացքում Հանրային հեռուստաընկերություն Հ1-ը հեռարձակել է ընդհանուր առմամբ 60 րոպե անվճար հեռուստաթեթեր յուրաքանչյուր մասնակցի համար՝ համաձայն օրենքի: Ի լրումն, բոլոր մասնակիցները մշտադիտարկվող հեռուստատեսություններում գնել են քաղաքական գովազդի վճարովի եթերաժամանակ՝ հավասար պայմաններով[53]: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ քարոզարշավի ընթացքում Հանրային հեռուստաընկերություն Հ1-ը քարոզարշավի բոլոր մասնակիցներին տրամադրել է համամասնորեն հավասար եթերաժամ իր լրատվական հաղորդումներում: Արմենիա հեռուստատեսությունը տրամադրել է այլ մասնակիցների համեմատ գրեթե երկակի ավելի լրատվական լուսաբանում ՀՀԿ-ին և Կոնգրես-ՀԺԿ-ին (19 և 21 տոկոս, համապատասխանաբար): Կենտրոն հեռուստատեսությունը տրամադրել է այլ մասնակիցների համեմատ զգալիորեն ավելի լրատվական լուսաբանում (18 տոկոս) Ծառուկյան դաշինքին: Շանթ հեռուստատեսությունը լրատվական լուսաբանման 20 տոկոսը տրամադրել է ՀՀԿ-ին, մինչդեռ մնացածներին հատկացրել է 7-12 տոկոս: Երկիր մեդիան տրամադրել է ՀՅԴ-ին իր լրատվական լուսաբանման 25 տոկոսը՝ մյուսներին թողնելով 6-13 տոկոս: Մշտադիտարկված բոլոր հեռուստատեսությունների լրատվական լուսաբանման 98 տոկոսը չեզոք կամ դրական տոնայնությամբ է: Այդուհանդերձ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքները պաշտոնական քարոզարշավին նախորդող՝ փետրվարի 24-ից մինչև մարտի 4-ը ընկած ժամանակահատվածի համար ցույց են տալիս մշտադիտարկված հեռուստատեսությունների հստակ կողմնակալությունը ի օգուտ այդ հեռուստատեսությունների վերաբերյալ հանրային ընկալման մեջ եղած կուսակցական առնչությունների:

Ընդհանուր առմամբ, քարոզարշավին առչնվող լուսաբանման ընդհանուր ծավալը ամենամեծ ժողովրդականություն վայելող Արմենիա և Շանթ հեռուստատեսություններով և Հ1-ով եղել է սահմանափակ , և ամենադիտվող եթերաժամի հեռարձակման մեջ գերակայել են ժամանցային հաղորդումները: Կենտրոն հետուստատեսությունը և Երկիր մեդիան ունեցել են ընտրություններին առնչվող լուսաբանման առավել մեծ ծավալ, այդ թվում՝ հարցազրույցներ և բանավեճեր: Այդուհանդերձ, նրանց լսարանի մասնաբաժինը առավել փոքր է: Հիմնական հեռուստատեսություններով, այդ թվում՝ Հ1-ով, մասնակիցների բանավեճեր չեն հեռարձակվել, ինչը կարող էր մեծացնել ընտրողների՝ մասնակիցների նախընտրական ծրագրերը համեմատելու հնարավորությունը, և ընդդիմադիր կուսակցություններին հնարավորություն ընձեռել մարտահրավեր նետելու իշխող կուսակցությանը ուղղակիորեն հանրային կերպով:

---

52 Ի լրումն, մարտի 15-ին և 25-ին, ՀՌԱՀը թողարկել է իր մշտադիտարկման զեկույցները: Չնայած ՀՌԱՀի ներկայացրած զեկույցը ցույց է տալլիս մասնակիցների լուսաբանման անհավասար քանակը, ՀՌԱՀի կողմից որևէ խախտում չի արձանագրվելՕրինակ՝ Civilnet.am, Hetq.am և Ազատություն ռադիո կայանը:

53 Փետրվարի 24-ից մարտի 31-ը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳը մշտադիտարկել է հանրային Հ1ը, մասնավոր Արմենիա, Կենտրոն, Շանթ և Երկիր մեդիա հեռուստատեսությունները: Ի լրումն, երեք առցանց լրատվամիջոցներ aravot.am-ը, armtimes.com-ը և hetq.am-ը ևս մշտադիտարկվել են: :

ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Ըստ Ընտրական օրենսգրքի՝ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները եւ անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողովում, իսկ ԿԸՀ-ի դեմ ներկայացված բողոքները ընդդատյա են Վարչական դատարան: Ընտրությունների վերջնական արդյունքներին վերաբերող բողոքները կարող են ներկայացվել միայն Սահմանադրական դատարան[54]: Հակառակ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախկինում արված հանձնարարականների, Ընտրական օրենսգիրքը նախատեսում է բողոքներ ներկայացնելու իրավունքը միայն այն անձանց համար, ում ընտրական իրավունքները խախտվել են:[55]

Միայն ընտրություններին մասնակցող կուսակցությունները եւ ոչ թե ընտրողները կարող են բողոքարկել ընտրությունների վերջնական արդյունքները, որը հակասում է միջազգային չափանիշներին և լավ պրակտիկային:[56] Ընդհանուր առմամբ, բողոքներ ներկայացնելու և դրանք կապակցությամբ որոշումներ կայացնելու ժամկետները ողջամիտ են:

Չնայած որ բավական մեծ թվով մեղադրական հայտարարություններ էին ներկայացվել այս ընթացքում, սահմանափակ թվով բողոք-դիմումներ էին ներկայացվել ընտրական հանձնաժողովներ և դատարան: ԿԸՀ ստացել է 15 դիմում, որոնցից 4-ը մասնակցող կուսակցությունների դաշինքներից: Մնացած 9 դիմում-բողոքները ներկայացվել են ՀԿ-ների կողմից և հիմնականում մերժվել են՝ նմանատիպ բողոք բերելու իրավունք չունենալու հիմքով: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն քննարկել է դրանցում բարձրացվող հարցերն իր նախաձեռնությամբ սկսած վարույթի շրջանակներում:[57] Բոլոր բողոքներն առնչվել են քարոզչության խախտումներին, այդ թվում՝ քարոզչական շտաբերը պետական մարմիններին պատկանող տարածքներում տեղակայելուն, ընտրողներին ընտրակաշառք կամ ծառայություններ խոստանալուն, վարչական ռեսուրսները

---

54 Այդպիսի բողոք կարող է ներկայացվել Սահմանադրական դատարան վերջնական արդյունքների հրապարակումից հետո հինգերորդ օրը, որն 15 օրվա ընթացքում պետք է որոշում կայացնի: Նշված ժամկետից առաջ նման բողոքներ չեն կարող բերվել: Ընտրական օրենսգիրքն ընդլայնել է ընտրությունների արդյունքներով ընդունվող այն որոշումների ցանկը, որոնց կապակցությամբ կարելի է դիմել Սահմանադրական դատարան:

55 Համաձայն 2002 թվականի Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերով լավագույն գործելակարգերի օրենսգրքի» բացատրական զեկույցի 99-րդ պարբերության, «[ընտրական] վեճերով բողոք բերելու իրավունքը պետք է շնորհված լինի հնարավորինս լայնորեն: Այն պետք է հասանելի լինի յուրաքանչյուր ընտրողին՝ բողոք ներկայացնելու համար»: ՀԿ-ներից մեկը տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ԸԴԱ-ին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացրել հինգ գանգատ՝ վիճարկելու ընտրական վեճերով բողոք բերելու իրավունքի բացակայությունը, որոնք դեռևս չեն քննարկվել դատարանի կողմից:

56 2002 թվականի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերով լավագույն գործելակարգերի օրենսգրքի» Բաժին 3.3.-ում առաջարկվում է, որ «բոլոր թեկնածուները և այդ ընտրատարածքում գրանցված բոլոր ընտրողները պետք է իրավասու ունենան բողոքարկելու իրավունք»:

57 ՀԿ-ի կողմից ներկայացված բողոքներից մեկն ըստ էության քննարկվել է ԿԸՀ-ի կողմից և մերժվել: Այնուամենայնիվ, Վարչական դատարանը վերը նշված որոշումը բողոքարկելու հայցը մերժել է՝ հայցվորի՝ նման բողոք բերելու իրավունքի բացակայության հիմքով:

չարաշահելուն և քարոզչությամբ զբաղվելը պաշտոնական լիազորություններն իրականացնելիս:

ԿԸՀ-ն մերժել է երկու բողոք-դիմումներ, որոնցում կուսակցությունների դաշինքները պահանջում էին ուժը կորցրած ճանաչել ՀՀԿ-ի գրանցումը վարչական ռեսուրսի չարաշահման հիմքով՝ դպրոցների տնօրեններին և ուսուցիչներին իրենց աջակցողների ցուցակներ կազմելու գործին ընդգրկելու համար: ԿԸՀ-ն գտավ, որ առկա չէ որևէ ապացույց, որ տնօրենները և ուսուցիչները հավաքել են ստորագրություններն իրենց պաշտոնական լիազորություններն իրականացնելիս կամ քարոզարշավի համար նախատեսված ժամանակահատվածում: Չնայած որ ԿԸՀ-ն դիտարկեց որոշ վկայակոչվող փաստեր, այն դժկամությամբ էր քննում խնդրահարույց հարցերը, ինչպես, օրինակ, ուսուցիչների նկատմամբ կիրառվող հնարավոր ճնշումները և ահաբեկումները՝ վերջիններիս ստորագրություններ հավաքագրելուն ներգրավելու նպատակով: [58]

ԸԸՀ-ները չեն ստացել պաշտոնական բողոքներ, բայց իրենց իսկ նախաձեռնությամբ հարուցել են վարչական վարույթներ և քայլեր են ձեռնարկել ընտրարշավի ընթացքում խախտումների կապակցությամբ, այդ թվում՝ մոտ 50 քարոզչական նյութերի ոչնչացման դեպքերով:

Վարչական դատարան է ներկայացվել երկու հայց երկու թեկնածուների կողմից՝ չորս տարվա բնակությունը հաստատող տեղեկանքը չտրամադրելու որոշումը բողոքարկելու նպատակով և վեց հայցեր ԿԸՀ-ի որոշումների վերաբերյալ, որոնք վերաբերում էին ընտրարշավին առնչվող հարցերի և լրատվամիջոցների ներկայացուցիչների հավատարմագրման մերժմանը, որոնք բոլորն էլ մերժվել են:

Գլխավոր դատախազի կողմից ստեղծված աշխատանքային խումբն ուսումնասիրել է լրատվական միջոցներում լուսաբանված՝ ընտրախախտումներին առնչվող մոտ 225 հրապարակում, որոնք հիմնականում առնչվում էին ընտրակաշառքներին եւ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելուն, 57 դեպք, ներառյալ 46 ընտրակաշառքին առնչվող դեպքերի վերաբերյալ նյութերն ուղարկվել է ոստիկանություն դրանցում նշված հանգամանքերը պարզելու նպատակով ստուգողական գործողություններ կատարելու համար: Դեպքերի մեծամասնությունը հերքվել են կամ չեն հաստատվել: Չնայած 2016թ. Քրեական օրենսգրքի փոփոխություններն ապաքրեականացրել են ընտրակաշառքի ստացումը, եթե դրա մասին հաղորդվել է իրավապահ մարմիններին, հասարակության մեջ առկա դժկամությունը հաղորդել ընտրակաշառքի մասին դեռևս առկա է:[59] Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանը քննարկել է 148 հաղորդումներ ենթադրյալ խախտումների մասին, որոնք հիմնականում առնչվել են նախընտրական քարոզարշավի խախտումներին, եւ հինգ դեպք ուղարկել է իրավապահ մարմիններին:

---

58 ԿԸՀ գտավ, որ համակիրների ցուցակի՝ տեղական իշխանություններին հանձնելը չի հակասում օրենքին, քանի որ իշխանությունները կարող են ներգրավված լինել քարոզարշավում: Թեև օրենքով հստակ արգելվում է քարոզարշավ կատարելը պաշտոնական լիազորություններն իրականացնելիս, ԿԸՀ-ին չի քննել, թե երբ են այդ գործողություններն իրականացվել:

59 Ընտրակաշառքի մասին հաղորդումներից միայն երկուսն են ներկայացվել իրավապահ մարմիններին քաղաքացիների կողմից:

ՄԸԴԱ-ի զրուցակիցների մեծ մասը նշել է, որ հանրության մեջ առկա է դժկամություն՝ ընտրախախտումների վերաբերյալ հաղորդում տալու առումով՝ բողոքների լուծման մեխանիզմի արդյունավետ գործունեության հանդեպ վստահության բացակայության պատճառով:

Դատական համակարգի, ընտրական հանձնաժողովների եւ իրավապահ մարմինների անկախության պակասը[60], բողոքներ ներկայացնելու սահմանափակ իրավունքը, և այն եղանակը, որով ընտրական հանձնաժողովները քննել են բողոքները, խարխլել է ընտրական վեճերի լուծման հավաստիությունը եւ իրավական պաշտպանության արդյունավետությունը, ինչը հակասում է 1990 թ. ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 կետին, Եվրոպայի խորհրդի եւ այլ միջազգային չափանիշներին:[61]

Տեղական և միջազգային դիտորդներ

Օրենսդրությունը սահմանում է միջազգային և տեղական դիտորդական առաքելություն իրականացնելու հնարավորություն և իրավունք է վերապահում վստահված անձանց ներկա գտնվել ընտրատեղամասերում: Հավատարմագրման համար, տեղական դիտորդական կազմակերպությունները պարտավոր են ընդունել իրենց դիտորդների վարքագծի կանոնները և կազմակերպել նրանց ուսուցումը: Ի տարբերություն ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականների, նոր Ընտրական օրենսգիրքը պահանջում է տեղական դիտորդական խմբերից իրենց կանոնադրություններում ներառել ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հստակ նպատակներ՝ ընտրություններ նշանակելու օրը նախորդող նվազագույնը մեկ տարի առաջ, նման պահանջով նեղացնելով դիտարկելու հնարավորությունը: Սույն պահանջին չհամապատասխանելու պատճառով, ԿԸՀ –ը մերժեց գրանցել երկու դիտորդական կազմակերպություն:[62] Որոշ ՀԿ-ներ ԸԴԱ-ին տեղեկացրել են, որ հավատարմագրման համար դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետը՝ քվեարկությունից 15 օր առաջ դիտորդներին մոբիլիզացնելու առումով ստեղծելու է դժվարություններ: [63]

ԿԸՀ հավատարմագրել է 49 տեղական կազմակերպություններ՝ ընդհանուր առմամբ 28,021 դիտորդներ, ինչպես նաև 640 միջազգային դիտորդներ: ԸԴԱ-ի որոշ զրուցակիցներ

---

60 2015 թվականի պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ Եվրախորհրդի կոռուպցիայի դեմ պայքարող երկրների խմբի (GRECO) զեկույցում դատական իշխանության անկախության մակարդակը գնահատվում է որպես ոչ բավարար

61 ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությունը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք պետք է ունենա վարչական որոշումների դեմ արդյունավետ բողոքարկման այնպիսի միջոցներ, որոնք կերաշխավորեն հիմնարար իրավունքների պաշտպանությունը և կապահովեն իրավական ամբողջականությունը»: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք արդյունավետ պաշտպանության իրավունք ունի այն արարքներից, որոնք խախտում են իրեն շնորհված հիմնարար իրավունքները»:

62 ԿԸՀ-ը մերժել էր նախկինում հավատարմագրված «Տեղական շտաբ»-ի հավատարմագրումը, որը դիտարկել էր 2016 թվականի հոկտեմբերի տեղական ընտրությունները և 2016 թվականի ապրիլի 28-ին հիմնադրված «Հյուսիսային դարբաս»-ի հավատարմագրումը:

63 ԵԱՀԿ ԺՀՄԻԳԺ-ը և Վենետիկի հանձնաժողովը նախորդ հանձնարարականներում առաջարկել էին կրճատել ժամկետները:

կարծում էին, որ մի շարք տեղական կազմակերպություններ փոխկապակցված էին տարածքային թեկնածուների հետ: Միջազգային բոլոր ՀԿ-ներին չեն ուղարկվել ընտրությունները դիտարկելու պաշտոնապես հրավեր՝ այն ֆորմալ բացատրությամբ, որ արդեն իսկ հավատարմագրված են մեծ թվով դիտորդներ, ինչը մարտահրավեր է նետում ԵԱՀԿ պարտավորություններին:[64] Լրատվամիջոցները և քաղաքացիական հասարակությունը քննադատել են Ընտրական օրենսգրքի այն դրույթները, որոնք հնարավորություն են տալիս ընտրողաբար սահմանափակել տեղական դիտորդների և լրատվամիջոցների ներկայացուցիչների թիվը ընտրատեղամասերում:[65]

Քվեարկության օրը

Քվեարկության օրը ընդհանուր առմամբ անցել է խաղաղ և հանգիստ, լուրջ միջադեպեր չեն արձանագրվել երկրի տարածքում: Այնուհանդերձ, ՄԸԴԱ դիտորդները արձանագրել են լարվածություն (դիտարկումների 6 տոկոսում) և ընտրողների նկատմամբ ճնշումներ (3%), որոնք տեղի են ունեցել տեղամասերի ներսում և դրսում: Դրա հիմնական պատճառն այն էր, որ կուսակցությունների մեծ թվով վստահված անձանց և այլոց ներկայությունն էր ընտրատեղամասերի շրջակայքում ամբողջ օրվա ընթացքում, և ՏԸՀ-ները կամ ոստիկանությունը նրանց չէր ցրում: Ոստիկանությունը հետևողականորեն չէր իրականացնում ընտրական տեղամասերի առաջ մարդկանց կուտակումներ թույլ չտալու օրենքի պահանջը[66]: ԿԸՀ-ի հաղորդման համաձայն, ընտրողների նախնական մասնակցությունը կազմել էր 61տոկոս:

Ընտրական տեղամասերի բացումը դրական է գնահատվել դիտարկումների 95 տոկոսի դեպքում: Հիմնականում պահպանվել են ընթացակարգերը և ընտրական տեղամասերը բացվել են ժամանակին: Այնուամենայնիվ, դիտարկված ընտրատեղամասերի 5%-ում քվեատուփերի դատարկ լինելը և ապա կնքվելը չի դիտարկվել:

ՄԸԴԱ-ի դիտորդների կողմից ընտրական գործընթացը բացասական է գնահատվել դիտարկումներից 12 տոկոսում: Դրա պատճառը հիմնականում մարդկանց կուտակումներն էին՝ դիտարկումների 26 տոկոսում, հերթերի վատ հսկողությունը (12 տոկոս) և ընտրողների կողմից ընտրական ընթացակարգերը հասկանալու հետ կապված դժվարությունները (35 տոկոս): Չնայած նրան, որ ընթացակարգերը ընդհանուր առմամբ պահպանվում էին, ընտրողները միշտ չէ, որ կարողանում էին գաղտնի քվեարկել (2 տոկոս) և խմբակային քվեարկություններ՝ ներառյալ ընտանիքի անդամների միացյալ

---

64 Ի թիվս այլոց, դիտորդական հրավեր չեն ստացել Ընտրությունների մշտադիտարկման եվրոպական ցանցի կազմակերպությունները: 1999 թվականի ԵԱՀԿ Ստամբուլի փաստաթղթի կետ 25-ով ԵԱՀԿ մասնակից Պետությունները վերահաստատել են իրենց պարտավորությունը՝ «հրավիրել դիտորդ մեր ընտրություններին՝ այլ մասնակից Պետություններից, ԺՀՄԻԳ-ից, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովից և համապատասխան հաստատություններից ու կազմակերպություններից, որոնք ցանկանում են մեր ընտրության ընթացքը»:.

65 Նման սահմանափակումներ կարելի է կիրառել միայն այն դեպքում, եթե այն համաձայնեցված է ԸԸՀ-ի անդամների որակյալ մեծամասնության հետ և այն դեպքում, երբ դիտորդների թվի սահմանափակումը չի կարող լինել պակաս, քան 15-ը: Այս սահմանափակումը չի տարածվում այցելուների, միջազգային դիտորդների և հեռուսատընկերությունների ներկայացուցիչների վրա:.

66 Ընտրական օրենսգիրքը արգելվում է տեղամասին հարող տարածքում մինչև 50մ շառավղող խմբերի հավաքվելը:

քվեարկությունը, արձանագրվել են դիտարկումների 10 տոկոսում: ԸՄԴԱ-ի դիտորդներն արձանագրել են լուրջ իրավախախտումների մի քանի դեպքեր, ներառյալ փորձերը պարտադրել ընտրողներին, թե ում համար քվեարկել, դիտարկումների 7 տոկոսում, ուրիշի փոխարեն քվեարկելը (2 տոկոս) և նույն անձը, որը ուղեկցում է բազմաթիվ ընտրողներին ընտրախցիկ (3 տոկոս) [67]: Ընտրատեղամասերի մի զգալի մասը (69 տոկոս) հասանելի չէր հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Կուսակցության վստահված անձինք ներկա էին դիտարկված տեղամասերի 97 տոկոսում, իսկ տեղական դիտորդները՝ 94 տոկոսում՝ աջակցելով թափանցիկության գործընթացին: Այնուամենայնիվ, դիտարկումների 12 տոկոսում վստահված անձինք, տեղական դիտորդները, տեղական պաշտոնյաները կամ ոստիկանությունը միջամտում էին ընտրությունների ընթացքին[68]: Ի հավելումն, մարդկանց մեծ կուտակումներ են արձանագրվել ընտրատեղամասերի մոտակայքում (30 տոկոս), լարվածություն է նկատվել դիտարկումների 6 տոկոսում և ճնշում ընտրողների վրա՝ դիտարկումների 4.5 տոկոսում:

Ընտրողների նույնականացման պրոցեսը ԱՆՍ-ների միջոցով արդյունավետ էր՝ և էական խնդիրներչեն արձանագրվել[69]: ՄԴԱ-ի դիտորդները նաև նշել են նույնականացման փաստաթղթերի և մատնահետքերի սկանավորման հետ առնչվող որոշ խնդիրներ: Այնուամենայնիվ, սա չի հանգեցրել քվեարկության էական խաթարման: ԸՄԴԱ-ի դիտորդները նշել են 9 դեպք, երբ կրկնակի քվեարկության փորձ է կատարվել, որոնք արձանագրվել են ԱՆՍ-ների կողմից: ԱՆՍ-ները հնարավորություն էին ընձեռում ընտրողներին ուղղորդել այն դեպքերում, երբ նրանք գրանցված էին նույն ԸԸՀ-ի այլ տեղամասում, և սա դիտարկվել է 55 տեղամասերում:

Այս ընտրություններում առաջին անգամ տեղադրվել են տեսանկարահանող սարքեր 1499 ամենամեծ ընտրատեղամասերում, այնպես որ քվեարկության օրվա ընթացակարգերը կարող էին ձայնագրվել և դիտարկվել համացանցի միջոցով[70]: Տեխնիկական խնդիրների պատճառով հանրային առցանց հեռարձակումը առկա չէր բոլոր ընտրական տեղամասերում, հատկապես քվեարկության օրվա առավոտյան, այնուամենայնիվ մասնակիցները և ԿԸՀ ունեին անխափան մուտք բոլոր տեսանկարահանող սարքերին՝ ամբողջ օրվա ընթացքում սերվերների հետ անմիջական կապի շնորհիվ[71]: Փակումից հետո մի շարք ընտրատեղամասերում ՏԸՀ-ները այնպես էին

---

67 Գլխավոր դատախազությունը գրանցել է ընտրության օրվա խախտումների մասին 1,594 հաղորդագրություններ, այդ թվում՝ ձայների գնում, քվեարկության գաղտնիության խախտում և ուրիշի փոխարեն քվեարկություն: Ընդհանուր թվով 254 դեպքեր ուղարկվել են լրացուցիչ հետաքննության: Ոստիկանության կողմից գրանցված 176 դեպքերից 32 դեպք ուղարկվել է լրացուցիչ հետաքննության:

68 ԸԴԱ-ի դիտորդները նշեցին, որ որոշ տեղական դիտորդներ փոխկապակցված էին քաղաքական կուսակցությունների կամ տարածքային թեկնածուների հետ:

69 ԿԸՀ հաղորդել է, որ վատ աշխատանքի պատճառով ստիպված էին փոխել որոշ ԱՆՍ սարքեր:

70 Ընտրական օրենսգիրքը սահմանում է վեբ տեսախցիկների տեղադրում բոլոր ընտրական տեղամասերում, սակայն ֆինանսական սահմանափակումների պատճառով այդ պահանջը չի կատարվել:

71 Օրվա տարբեր ժամերին չեն աշխատել մոտ 30 տեսախցիկներ, ըստ հաղորդումների՝ էլեկտրականության մատակարարման խափանումների պատճառով:

դասավորել սեղանները, որ ձայները հաշվելու ընթացքը հնարավոր չէր պատշաճ կերպով հետևել տեսանկարահանող սարքերի միջոցով:

Ձայների հաշվարկը ընդհանուր առմամբ անց է կացվել թափանցիկ, այնպես որ ներկա գտնվողները ընդհանուր առմամբ կարողանում էին հետևել հաշվելու ընթացակարգերին և ունեին հնարավորություն ուսումնասիրելու քվեաթերթիկը պահանջի դեպքում: Ընթացքը գնահատվել է բացասական 110 դիտարկումներից 20-ում՝ հիմնականում կուսակցության վստահված անձանց և դիտորդների միջամտության պատճառով, ովքեր անմիջականորեն մասնակցում էին քվեների հաշվարկման ընթացքին դիտարկված 32 տեղամասերում: Ընթացակարգերը ընդհանուր առմամբ պահպանվել էին, այնուամենայնիվ, ՏԸՀ-ները հետևողականորեն և ողջամտորեն չեն դիտարկել քվեաթերթիկների վավերությունը տեղամասերի 11 տոկոսում՝ հատկապես տարածքային թեկնածուների դեպքում: Թափանցիկությունը որոշ դեպքերում խաթարվել է, երբ քվեաթերթիկները ցույց չեն տրվել բոլոր ներկա գտնվողներին (5 տոկոս) և տարածքային թեկնածուների քվեաթերթիկների մեկ առ մեկ հաշվարկումը (15 տոկոս): ՏԸՀ-ները դժվարանում էին լրացնել ընտրությունների արդյունքները արձանագրություններում 16 դիտարկումներում, որոնց տվյալները չեն համապատասխանում դիտարկումների 9 տոկոսում և արձանագրությունները նախապես ստորագրված էին ՏԸՀ-ների անդամների կողմից դիտարկումների 9 տոկոսում: ՄԸԴԱ-ի դիտորդները նաև արձանագրել են լարվածության և անհանգիստ մթնոլորտի դեպքեր 7 տեղամասերում և ՏԸՀ-ի անդամների նկատմամբ ճնշումներ գործադրելու 8 դեպքեր:

Աղյուսակավորման ընթացքը սկսվել է անմիջապես, երբ ՏԸՀ-ներն արձանագրությունները հանձնել են ԸԸՀ-ներին: ՄԸԴԱ դիտորդները գնահատել են աղյուսակավորման ընթացքը դրական դիտարկված 38 ԸԸՀ-ներից 33-ում: ՏԸՀ-ների արձանագրությունների արդյունքների գրանցումը ԸԸՀ-ներում հիմնականում լավ էր կազմակերպված: Դիտորդները արձանագրել են արձանագրությունների թվերի փոփոխության որոշ դեպքեր մաթեմատիկական սխալների պատճառով, այնուհանդերձ, չի նկատվել որևէ դիտավորյալ կեղծարարություն: Աղյուսակավորումը ընթացքի մեջ է և օրենքի պահանջներին համապատասխան պետք է ավարտվի ապրիլի 3-ին ժամը 16.00-ին: ԿԸՀ սկսել է հրատարակել նախնական արդյունքները ըստ տեղամասերի առցանց անմիջապես կեսգիշերից հետո, այսպիսով ապահովելով քվեարկության արդյունքների թափանցիկությունը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Երևան, ապրիլի 3, 2017 թվականի– Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ սույն հայտարարությունը կազմվել է ընդհանուր նախաձեռնության արդյունքում, որում ներգրավված են ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վերաժողովը (ԵԱՀԿ ԽՎ) Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) և Եվրոպական խորհրդարանը (ԵԽ): Գնահատումը կատարվել է ընտրությունների համապատասխանությունը ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի առաջ ստանձնած և այլ միջազգային պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների չափանիշներին և համապետական օրենսդրությանը որոշելու նպատակով:

ԵԱՀԿ գործող նախագահի կողմից Պարոն Խոսե Իգնասիո Սանչես Ամորը նշանակվել էր որպես ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդական առաքելության հատուկ համակարգող և ղեկավար: Պարոն Գեեր Յորգեն Բեքեֆոլդը գլխավորում էր ԵԱՀԿ ԽՎ պատվիրակությունը: Տիկին Լիլիան Մորի Պասքիեն գլխավորում էր ԵԽԽՎ պատվիրակությունը: Տիկին Հայդի Հաութալան գլխավորում էր ԵԽ պատվիրակությունը: Դեսպան Յան Փեթերսոնը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի ղեկավարն է, ով ստանձնել է այդ պաշտոնը փետրվարի 20-ից:

Ընտրությունների միջազգային դիտորդական սույն առաքելության մեջ ընդգրկված բոլոր հաստատությունները հավանություն են տվել 2005 թվականի Ընտրությունների միջազգային դիտորդության սկզբունքների մասին հայտարարագրին: Նախնական հանգամանքների և եզրակացությունների վերաբերյալ սույն հայտարարությունը պատրաստվել է մինչև ընտրության գործընթացի ավարտը: Ընտրության վերջնական գնահատականը մասնակիորեն կախված է ընտրական գործընթացի մնացած փուլերի անցկացումից, ներառյալ՝ արդյունքների հաշվարկը, աղյուսակավորումը և արդյունքների հայտարարումը և ընտրական օրվան հաջորդող հնարավոր բողոքների և դիմումների քննումը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը կհրապարակի համապարփակ վերջնական հաշվետվություն, ներառյալ հնարավոր բարեփոխումների մասին հանձնարարականները, ընտրական գործընթացի ավարտից հետո՝ ութ շաբաթվա ընթացքում: ԵԱՀԿ ԽՎ իր զեկույցը կներկայացնի իր Մշտական կոմիտեի հանդիպմանը Մինսկում՝ 2017 թվականի հուլիսին: ԵԽԽՎ իր զեկույցը կներկայացնի իր Մշտական կոմիտեին Պրահայում՝ մայիսի 30-ին: ԵԽ իր զեկույցը կներկայացնի իր Արտաքին գործերի կոմիտեի նիստին՝ ապրիլի 10-ին:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը կազմված էր մայրաքաղաքում տեղակայված 14 փորձագետներից և 28 երկարաժամկետ դիտորդներից, որոնք գործուղվել էին ողջ երկրի տարածքում: Ընտրության օրը ներկա էին 41 երկրների 439 դիտորդներ, այդ թվում՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 340 երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդներ, ինչպես նաև ԵԱՀԿ ԽՎ-ի 63 անդամներից կազմված պատվիրակությունը, ԵԽԽՎ-ի 24 անդամից բաղկացած պատվիրակությունը և ԵԽ-ի 12 անդամներից բաղկացած պատվիրակությունը: Քվեարկության բացումը դիտարկվել է 118 ընտրական տեղամասերում, քվեարկությունը դիտարկվել է 1,470 ընտրական տեղամասերում ողջ երկրի տարածքում: Արդյունքների հաշվարկը դիտարկվել է 141 ընտրական տեղամասերում, իսկ աղյուսակավորումը՝ 38 ՏԸՀ-ներում:

ԸԴԱ-ը ցանկանում է շնորհակալություն հայտնել իշխանություններին՝ նրանց կողմից ընտրությունների դիտարկման հրավերի համար և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ օգնության համար: ԸԴԱ-ն Ցանկանում է հայտնել իր երախտագիտությունը նաև պետական այլ մարմիններին, քաղաքական կուսակցություններին,

լրատվամիջոցներին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, միջազգային համայնքի ներկայացուցիչներին՝ իրենց հետ համագործակցելու համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար, խնդրում ենք կապվել հետևյալ անձանց հետ.

- դեսպան Յան Փիթերսոն, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ –ի ղեկավար, Երևանում՝+374 43 380 171
- Թոմաս Ռայմեր, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ խոսնակ՝ +374 (0)43 380 425 կամ +48 609 522 266) կամ Ալեքսեյ Գրոմով, ԵԱՀԿ.ԺՀՄԻԳ ընտրությունների խորհրդատու, Վարշավայում՝ +48 663 910 311,
- Իրինա Սաբաշուկ, ԵԱՀԿ ԽՎ, +374 (0)43 056 133 կամ +45 60 10 81 73;
- Բոգդան Տորկատորիու, ԵԽԽՎ, +374 (0)55 707 356 կամ +33 650 39 29 40;
- Ջուլիեն Քրամփս, ԵԽ, +374 (0)43 065 465կամ +32473525072
-

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հասցեն՝
Դաբըլ թրի բայ Հիլթոն հյուրանոց, 4-րդ հարկ
4/2 Գրիգոր Լուսավորիչի փողոց, Երևան, 0015
Հեռ. + 374 11 555 125, ֆաքս՝ + 374 11 555 124, էլ. հասցե՝ office@odihr.am

Սույն զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը:
Հայերեն լեզվով հասանելի է միայն ոչ պաշտոնական թարգմանությունը: